



ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ

Աուդիտորական Խորհրդատվական Ընկերություն

Աուդիտորական Գործունեության Լիցենզիա Թիվ 006

ՀՀ, Երևան, Խորենացի 47/7, քն. 76 հեռ/ֆաքս +37410577544

Email: [auditservicellc@gmail.com](mailto:auditservicellc@gmail.com), <http://www.auditservice.am>

ԱՆՎԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի քաղաքապետ արն. Ս.Դարբինըանին

Երևան-02/02/2016թ.

Մեր կողմից իրականացվել է Վանաձորի համայնքի 2015թ-ի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների աուդիտ, որը ներառում է համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունները (հատված 1), համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ զործառնական դասակարգմամբ (հատված 2), համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (հատված 3), համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասորդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը (հատված 4) և համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասորդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը (հատված 5):

ԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համայնքի ղեկավարությունը պատասխանատու է հաշվետվությունների՝ միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվությունները, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

ԱՌԻԲՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստաթղթերի ձեռք բերման նպատակով մշակված ընթացակարգերը, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատմանը, այլ ոչ թե համայնքի ող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Եզրագրություն

Մեր կարծիքով Վանաձորի համայնքի 2015թ-ի բյուջեի կատարման հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են բյուջեի կատարման ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ բյուջետային օրենսդրությանը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱԳՄԱՆ ՀԻՄՈՒՆՔԸ և ԲԱՇԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, ուշադրություն ենք դարձնում, որ նշված հաշվետվությունները չեն կարող կիրառվել մեկ այլ նպատակով: Մեր եզրակացությունը նախատեսված է բացառապես Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու անդամների համար և բացի նշված անդամներից չպետք է բաշխվի այլ կողմերին:

Առողիտ Սերվիս ՄՊԸ Տնօրեն

Որակավորված առողիտոր՝

Գոռ Դավթյան

Որակավորված առողիտոր՝

Արշավիր Զուրաբյան

